

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒ ԳՐԲԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այլ, Մխանիկյանի անվան Պետական հանրալից գրադարանը ձևանարել է հայ տպագիր գրքի ընդհանուր ցուցակ (մատենագիտություն) կազմելու աշխատանքներին։ Այդ նպատակով գրադարանում ստեղծված է հայկական մատենագիտության բաժին։ Հայ տպագիր գրքի ընդհանուր ցուցակում պետք է ներկայացվեն առաջին հայ տպագիր գրքից (1512) մինչև մեր օրերը ետևել են լեզվով որևէ տեղ տպագրված բոլոր գրքերը կրեդիտվեն նաև հայատառ թուրքերեն և լատինատառ հայերեն գրքերը։ Մատենագիտությունը բաղկացած է կլինի մի բանի սովոր հատորից։ Ամեն մի հատորում կներկայացվեն գիտություն և մշակույթի մեկ կամ մի բանի իրար մոտ ընդգամվածների գրքերը։ Յուրաքանչյուր գրքի նկարագրություն գիմաց ներկված է կլինի, թե որ գրադարանում է այն գտնվում կամ էթե որևէ գրադարանում չկա՝ ինչ գրավոր ուղղությոց է առնված։ Ընդհանուր ցուցակը կունենա տեղեկատու ցանկեր, այդ թվում՝ հեղինակային-ալբերենական, վերնագրային-ալբերենական, հայ տպագրության օջախների և այլն։

Ծրագրվում է պատրաստել նաև մեկ զուգահեռ, լրացուցիչ հատոր, որ կարվի 1512—1800 թվականներին տպագրված հայերեն գրքերի ալբերենական ցուցակը՝ յուրաքանչյուր գրքի բովանդակության ու տպագրության վերաբերյալ մանրամասն ծանոթություններով։

Հայ տպագիր գրքի ընդհանուր ցուցակը կլինի հայերեն գրքերի և հայ տպագրական արվեստի խակական հանրագիտարան։ Դրա շնորհիվ ամեն մի ընթերցող կարող է իմանալ գիտություն և մշակույթի ո՞ր բնագավառի, ո՞ր հայրցի վերաբերյալ հայերեն ի՞նչ գրքեր են տպագրվել կամ որևէ հեղինակից հայերեն ի՞նչ գրքեր կան, ինչպիսի հրատարակություններով և որտեղ կարելի է օգտվել դրանցից յուրաքանչյուրից։

Հայ գրքի ընդհանուր գրացուցակ-մատենագիտության խիստ պակասը վաղուց է վեր գզացվում է։

Հայ մշակույթի պատմության մեջ հայկական ընդհանուր մատենագիտություն ստեղծելու եր-

կու մասն է եղել։ Առաջինը գրադարանակա Պատմական հրատարակչական էր (Վենետիկի Մխիթարյանների), ու 1883 թ. հրատարակեց իր «Հայկական մատենագիտություն։ Ալբերենական ցուցակ տպագրության գլխուն մինչև առ մեր երեք հարյուր հրատարակություն» 739 էջանոց աշխատությունը։ Մեծ ու բարեխղճ աշխատանքի հնգյիվ Զարհանալյանին հաջորդել է իր հատորում տեղեկություններ առ շուրջ 370 տարած ընթացքում տպագրված հայերեն գրքերի գլխի մասի վերաբերյալ։ Հանրահայտ են նաև Զարհանալյանի մատենագիտության լուրջ թերությունները, որոնք անխուսափելի էին հայկական առաջին մատենագիտության համար։

Երկրորդ անգամ հայկական մատենագիտություն կազմելուն ձևանարվում է Կարճյալ Վենետիկի Մխիթարյաններից թարգմանել ու մատենագետ Արսեն Ղազիկյանը, որը նախ փորձում է լրացնել ու ճշտել Զարհանալյանի գործը, բայց ի վերջո ստիպված է լինում կազմել բոլորովին նոր մատենագիտություն, որը պակասերով սկսում է հրատարակվել 1909 թվականից «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» վերնագրով։ Մատենագիտությունն ընդգրկում է 1512—1905 թվականներին հրատարակված հայերեն գրքերը։ Ղազիկյանի այս գործը իր ծավալով, տվյալների ու ծանոթությունների մանրամասնությամբ և ընդհանուր որակով աննախագեղ է հայ մշակույթի պատմության մեջ։ Մեծ ու բրնաջան է եղել հեղինակի աշխատանքը, «գոթյալին աշխատություն», «գործ մը, որուն ծանրությունը որակող բառ չունի գիտցածս հայերենը», — այսպես է որակում իր աշխատանքը Ա. Ղազիկյանը։ Դժբախտաբար Ղազիկյանը չկարողացավ իր այդ աշխատանքը հասցնել մինչև վերջ։ Նրա մահով գործն ընդհատվեց և այլևս ոչ որ հանձն չառավ ալն շարունակելու։

Հայաստանի հանրային գրադարանը հայ նոր մատենագիտություն կազմելու աշխատանքները հանձն է առել խորապես զգալով գործի ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը։ Պետք է նկատի ունենալ, որ ներկայումս այդ աշխատանքը մի բանի անգամ ղժվարացել է։ Բավական է ասել, որ Ղազիկյանի ընդգրկած ժամանակաշրջանի համեմատ հայ տպագիր գրքերի բանակը ներկայումս մոտավորապես

¹ Ժուղային, այսինքն՝ որևէ առանձին բնագավառի նվիրված հայերեն գրականություն հանձնարարական և այլ կարգի ցուցակները հատ են կազմվել։ Հատկապես վերջին տարիներս այդպիսի մի հարք ցուցակներ կազմել են Հայաստանի Պետղրապոլստը և Հանրային գրադարանը։

¹ Շատ թե քիչ ստույգ տվյալներ կան միայն մինչև XIX դարի տպագրված հայերեն գրքերի քանակի մասին (սուրջ 670 անուն)

տասնապատկվել է. Միայն Սովետական Հայաստանում լույս է տեսել 20 հազար անուն գիրք: Մեծ քանակությամբ հայերեն գրքեր են տպագրվել նաև Սովետական Միության մյուս հանրապետություններում՝ Ռուսաստանյան ֆեդերացիայում, Վրաստանում, Ադրբեջանում, ինչպես նաև արտասահմանի հայ գաղութներում:

Հայ գրքի ընդհանուր ցուցակի կազմումը ունի նաև իր խիստ յուրահատուկ դժվարությունները: Հայաստանի սահմաններից դուրս տարրեր ժամանակներում տպագրվել են բավական մեծ քանակությամբ հայերեն գրքեր: Դրանց մի մասը թեև այժմ հավաքված է Սովետական Հայաստանի խոշորագույն գրապահոցներում, բայց մի գգալի մասն էլ չկա մեզ մոտ, ցրված է ամբողջ աշխարհում: Մեծ աշխատանք է պահանջվում այդ գրականությունը մատենագիտության մեջ ընդգրկելու համար:

Հանրային գրադարանը ծրագրել է հայկական մատենագիտությունը նախապես կազմել այբբենական բարտային գրացուցակի ձևով, նկատի ունենալով այդպիսի գրացուցակի մի շարք գործնական առավելությունները (լրացումներ, վերադասավորության և համեմատման հեշտությունը և այլն): Նախ կկազմվի Հայաստանի գլխավոր գրապահոցների հայերեն գրքերի համահավաք գրացուցակը, ապա այն կլրացվի Սովետական Միության տարրեր գրադարաններում եղած հայերեն գրքերի անուններով. որից հետո աշխատանքներ կտարվեն գրացուցակում ընդգրկելու արտասահմանի խոշոր գրադարաններում եղած այն հայերեն գրքերը, որոնք չկան Սովետական Միության գրադարաններում: Աշխատանքի վերջին շրջանում համահավաք գրացուցակը կլրացվի գրադարաններում չհայտնաբերված, բայց տարբեր գրավոր աղբյուրներում հիշատակվող գրքերի անուններով: Դրանից հետո այբբենական կարգով դասավորված բարտերը կվերադասավորվեն սիստեմատիկ կարգով, ըստ բովանդակության, և մատենագիտությունը հնարավոր կլինի հատոր առ հատոր հրատարակել:

Ընդհանուր մատենագիտական ցանկերում ներկայացվող գրականության դասավորությունը կարող է լինել այբբենական, սիստեմատիկ կամ ժամանակագրական: Նյութերի դասավորության այս երեք կարգերն էլ տարբեր ժամանակներում, տարբեր մատենագիտությունների համար օգտագործվել են: Այդ կարգերից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Ինչպես հայտնի է, Գ. Ջարրհանայանը և Ա. Ղազիկյանը բնտրել էին նյութերի դասավորության այբբենական կարգը: Դրա առավելությունը մատենագիտու-

թյան համեմատաբար ավելի պարզ կազմությունն է (հեղինակների ազգանունների, վերնագրերի այբբենական կարգով), ինչպես և նրանից օգտվելու հեշտությունը: Սակայն այբբենական մատենագիտությունը սուսկ միակողմանի տեղեկատուի դեր է կատարում: Այն որևէ գրքի մասին կարող է տեղեկություն տալ միայն այն դեպքում, երբ մեզ ծանոթ է գրքի հեղինակի ազգանունը, իսկ որոշ դեպքերում՝ գրքի անունը: Այլ խոսքով, այբբենական մատենագիտությունը տեղեկանք է տալիս այն մասին, թե մեզ ծանոթ այս կամ այն գիրքը հայերեն կա՞, թե՞ ոչ, կամ որևէ հեղինակ ինչ գրքեր ունի հայերեն, տալիս է այդ գրքերի հրատարակության մասին տվյալներ: Մինչդեռ այն ամենակարևոր հարցին, թե գիտության ու մշակույթի այս կամ այն բնագավառի վերաբերյալ ի՞նչ գրքեր կան հայերեն, այբբենական մատենագիտությունը չի պատասխանում: Մատենագիտության մեջ նյութերի այբբենական դասավորությունը ունի նաև մի այլ լուրջ թերություն՝ այդպիսի մատենագիտության ամեն մի հատորում ներկայացվում են մեկ կամ մի քանի տառով սկսվող հեղինակների գործեր, և պետք է ողջ հրատարակությունն ավարտվի, որպեսզի մատենագիտությունն ամբողջանա, իր դերը լրիվ կատարի: Ըստ որում, մատենագիտությունը ստեղծելու աշխատանքն այնքան աշխատատար է ու երկարատև, որ հաճախ տարբեր պատճառներով ընդհատվում է նրա հրատարակությունը: Նյութերի այբբենական դասավորության դեպքում հրատարակության ընդհատման պատճառով արդեն տպագրված հատորների արժեքը չափազանց ընկնում է:

Նյութերի ժամանակագրական դասավորությունը շատ անտարբեր է գրքի ու տպագրության պատմության ուսումնասիրության տեսակետից, սակայն որպես գրքի հանրագիտության՝ այդ դասավորությամբ մատենագիտությունը դարձյալ իրեն չի արդարացնում: Ժամանակագրական դասավորության դեպքում նույնպես հնարավոր չէ որոշել, թե ո՞ր բնագավառների վերաբերյալ ի՞նչ գրքեր կան հայերեն, քանի որ տարբեր ժամանակներում միևնույն հարցի մասին լույս տեսած գրքերը տարբեր տեղերում են ներկայացվում, ցրվում են նաև միևնույն հեղինակի՝ տարբեր ժամանակներում հրատարակված գրքերը: Նույնիսկ միևնույն գրքի տարբեր հրատարակությունները իրարից անջատվում են:

Դրականության սիստեմատիկ՝ ըստ բնագավառների դասավորությունը զերծ է այս թերություններից: Նրա շնորհիվ տարբեր բնագավառների մասնագետներ հեշտությամբ կիմանան, թե

Հայերին ինչ զորքեր կան իրենց հետադարձորդ հարցի մասին, այնտեղ կներկայացվի հայ տպագիր գիրքը ըստ թվականների՝ Այդպիսի մատենագիտության ամեն մի հատորը միաժամանակ կլինի մի ամբողջական հրատարակություն։ Բացի այդ, յուրաքանչյուր հատորի, ինչպես և ողջ հրատարակության վերջում տրվող հեղինակային-այբբենական ցանկը կփոխարինի այբբենական մատենագիտության առավելությունները՝ այս կամ այն հեղինակի անունով հրատարակված գրքերի մասին լրիվ տեղեկություններ տալու տեսակետից։ Ըսկ 1512—1900 թվականների հայ գրքի ժամանակագրական ցուցակն ընդգրկող լրացուցիչ հատորը անհրաժեշտ տեղեկություններ կտա հայ գրքի պատմության ամենահետադարձական շրջանի վերաբերյալ։ Պետք է ասել, սակայն, որ մատենագիտության մեջ նյութերի սխառմամասիկ դասավորությունն ստեղծելը բավական դժվար գործ է։ Դրա համար անհրաժեշտ կլինի հայերեն բոլոր հրատարակությունները դասակարգման ենթարկել նախօրոք մշակված սխառմաի համաձայն։ Հանրային գրադարանի հայ մատենագիտության բաժինը պետք է կարողանա հաղթահարել այդ դժվարությունը ևս։

Կարևոր հարց է նաև գրքերի նկարագրությունը։ Ի՞նչ տեղեկություններ տալ գրքի մասին։ Բավարարվե՞լ արդյոք գրքի հեղինակի, վերնագրի, հրատարակման (տեղ, թիվ) և քանակական (լջեր, նկարներ, չափս) տվյալների նշումով։ Թե՞ տալ ավելի մանրամասն տեղեկություններ։ Նպատակահամար համարվեց կազմել զորքերի նկարագրության երկու տեսակի կանոններ՝ հնատիպ գրքերի (մինչև 1850 թ. հրատարակված) և նոր շրջանի գրքերի համար։

Հնատիպ գրքերի նկարագրությունները կլինեն ավելի ծավալուն, նոր շրջանի գրքերի նկարագրությունները՝ ավելի պարզ, սակայն յուրաքանչյուր հրատարակության մասին կարևոր բոլոր տեղեկություններն ընդգրկող։

Քանի որ նախորդ հայ մատենագիտական ցանկերում ներկայացված գրքերի գտնվելու վայրը չի նշվել, այժմ էլ ոմանք կարծում են, որ այդ կարգի տեղեկություններ տալու հարկ չկա, Սակայն որոշվեց մատենագիտության մեջ գրքերի գտնվելու վայրը այնուամենայնիվ նշել, քանի որ այդ չափազանց մեծ նշանակություն կունենա ընթերցողների, հատկապես գիտական աշխատողների համար, մանավանդ հայ մատենագիտություն կազմելու հսկայական աշխատանքը կատարելուց հետո անիմաստ կլինեն շանել այդ ևս։

Պետական հանրային գրադարանի հայկական մատենագիտության բաժինը արդեն սկսել է իր աշխատանքները։ Նկարագրվում և դասակարգվում են հանրային գրադարանի գրքերը, դասավորվում պատրաստի նկարագրությունները։ Հայագիտական այս շատ կարևոր աշխատությունը ստեղծելու գործում հանրային գրադարանին պետք է օգնեն Հայաստանի Պետգրապալատը, Գիտությունների ակադեմիայի Կենտրոնական գրադարանը, Երևանի Պետական համալսարանի գրադարանը և Մատենադարանը։

Աշխատանքների վերջին շրջանում հանրային գրադարանը կզգա արտասահմանյան մի քանի գրադարանների, հատկապես Վենետիկի ու Վիեննայի ազգային գրապահոցների լուրջ օգնության կարիքը։

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԻ ՆՈՐ ԳԱՆՁ

Անտիոք քաղաքից մոտ 30 կմ. հեռավորության վրա, հեռավոր Գառնի կոչված վայրում (Հայդուքի մոտ) հույային աշխատանքների միջոցին գտնվել է միջնադարյան արժանի գրամենների մի զանգված։ Այդ զանգված ամբողջությամբ հետք է բերել Սփյուռքում մեր հայրենակից հետքեր Արմենակ Առաքելի Բուլատյանը, որը գրամագետ Պ. Կարապետյանի ջանքերով անհրաժեշտ դասակարգման և ուսումնասիրության ենթարկելուց հետո ուղարկել է այն Երևան՝ որպես նվեր Հայաստանի Պատմության Պետական թանգարանին։

Հետ ժամանակի՝ զանգվածի մեջ եղած գրամենները բաժանվում են երեք հիմնական խմբերի։

ա) Կիլիկյան հայոց թագավոր Լևոն II-ի (1195—1219) 72 գրամեններ։

բ) Փոքր Ասիայի սելջուկյան սուլթաններ Քեյխուսրուտ I-ի (1192—1200 և 1204—1213) և Քեյխուսրուտ III-ի (1267—1283) 4 գրամեններ։

գ) Կիլիկյան հայոց Հեթում թագավորի և նրա կնոջ՝ Զարեկ թագուհու (1226—1270) 42 գրամեններ։

Դանձր խիստ հետաքրքրական է իր կազմով, այնտեղ առկա են միջնադարյան հայկական այնպիսի արժանի գրամեններ, որոնց բազմազան տեսակներից մի քանիսը մեզ համար բուրրավոր են։ Բացի դրանից, նա մեզ ցույց է տալիս նաև Կիլիկյան հայկական պետության